ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԱՐ-Մեդիկա ՍՊԸ-ն ՈՒԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/62 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	WALLFLEX ENTERAL Stent	WallFlex™	Բոստոն Սայենտիֆիկ	Նախատեսված չարորակ նորագոյացությունների հետևանքով առաջացած աղիքային ստենոզների կամ անանցանելիության ընդարձակման համար: Ստենտը պետք է պատրաստված լինի նիտինոլային (Ni-Ti) լարից, որը ապահովում է բարձր ճկունություն և ձևի հիշողություն:Ստենտը պետք է ապահովի բավարար ռադիալ ձգողական ուժ՝ անանցանելիությունը վերականգնելու համար ։ Պետք է հասանելի լինեն մետաղական/չծածկված/ uncovered (Bare-metal) և պոլիմերային ծածկույթով/մասնակի կամ լրիվ ծածկված /covered / partially covered (Polymer-metal) տարբերակներ: Ստենտը պետք է ապահովի ջերմային ակտիվացում՝ տեղադրման ընթացքում դառնալով ավելի ճկուն և հեշտ կառավարելի, իսկ մարմնի ջերմաստիճանում (»33°C) պետք է ընդարձակվի՝

				ապահովելով անհրաժեշտ բացում Ստենտի վրա պետք է առկա լինեն պատկերային մարկերներ, որոնք հստակ տեսանելի են ռենտգենի տակ՝ ապահովելով ճշգրիտ տեղադրում: Ստենտի ծայրերը պետք է լինեն ատրավմատիկ (կլորացված)՝ պերֆորացիայի ռիսկը նվազեցնելու համար), որը նվազեցնում է գրգռումը և կանխում տեղաշարժը: Ստենտը պետք է մատակարարվի ներդրման համակարգով Համատեղելությունը ՝ էնդոսկոպի միջոցով (TTS – through-the-scope) կամ OTW (Over-the-Wire) : Չափսեր • Ստենտի տրամագիծ՝ 16–30 մմ • Ստենտի երկարություն՝ 40–180 մմ • Ներմուծման համակարգի տրամագիծ՝ ոչ ավելի քան 10–12 Fr Սարքը պետք է ապահովի ինքնալայնացում մարմնի ջերմաստիճանում, բավարար ռադիալ ուժ աղու լուսանցքը պահպանելու համար, նվազեցնի միգրացիայի ռիսկը կառուցվածքի կամ ծածկույթի հաշվին և հնարավորություն ընձեռի տեղադրման ընթացքում տեսողական ու ռենտգեն հսկողություն Ներմուծման համակարգը պետք է ներառի ստենտ, ներդրման համակարգ: Ուղղորդող լարը կարող է ներառվել որպես լրացուցիչ բաղադրիչ, սակայն մատակարարումը թույլատրվում է նաև առանց դրա: Արտադրանքը պետք է ունենա CE սերտիֆիկատ կամ համապատասխանի ISO կամ YY/T ստանդարտներին : Արտադրանքը պետք է ստերիլիզացված լինի էթիլենօքսիդով (EO):Օգտագործվող նյութերը պետք է լինեն կենսահամատեղելի և ունենան կենսահամատեղելիության հավաստում:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Ар-Медика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՈՒԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/62 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	фирменное наименование	товарный знак	наименование производителя	технические характеристики
1	-	-	-	-